Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 88

ք. Երևան **27.06.2022թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14.3/8722-2022, ՀՀ շրջակա միջավայրի 4/02.3/6437-2022, ՀՀ էկոնոմիկայի 03/5977-2022 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/6594-2022 և Կադաստրի կոմիտեի ԱԳ/6670-2022 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն **ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ճոճկան բնակավայրի** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ախթալա համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերից **0.04 հա** պահեստարաններ (կադաստրային ծածկագիր՝ 06-069-0261-0012) փոխադրել բնակավայրերի հողեր նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Տերտերյան

քարտուղար՝ Մ. Մկրտչյան